

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ. ԳՆԱԶԱԿԻՑ

Սեպտեմբերի 8

Գանձակ քաղաքի երկսեռ դպրոցները այս տարի լաւ ապագայ չեն խոստանում. ուսուցիչները իրանց մտաւոր հասկացողութեամբ նոյն դժբաղդութիւնն են գուշակում...

Այդպէս, մեծ. թեմական վերատեսուէր այս տարի ևս պակեց տեղիս մի. քանի հասկացող և գործունէ պարոնների յայտերը. նա ուղարկեց դպրոցներին միմիար իր փեսայ պ. Երեմազանեանցին. որի մասին առհասարակ լաւ չենք լսում և զրա կինը պէտք է լինի վարժուհի!!!

Միւս ուսուցիչները մեր գանձակցիներին յայտնի են իրանց լաւ և վատ կողմերով:

Տեսնենք, մեծ. պ. տեսուչ Նպակոպոսեանը ինչ կը փնտրէ իր համար. հասարակաց կարծիքով, նա կամ պէտք է յարմարվի այդ աւելի հաւաքած ուսուցիչներին հետ, կամ միանգամայն իր դպրոցները պէտք է ազատ կացուցանէ այդպիսի ֆէս սակար ձեռքերից, որոնք խեղճ Գանձակին և իրան ոչ մի կերպով պատու չեն բերում, և կամ մեծ. պարոնը ուղղակի պէտք է հրաժարական տայ տեսչութենից:—Այս երեք միջոցից մինը պէտք է որ լինի: Եւ աւելի հաւանական է վերջինը. նա արդէն, որպէս լսում ենք, մտադիր է տէրութեան պաշտօնական ծառայութեան մէջ մտնել...

Չարմանալի գործ. մեր խեղճ հոգաբարձութիւնը գոհում է տարեկան մի յայտնի գումար իր դպրոցների առաջադիմութեան համար և մեծ. թեմ. վերատեսուչն է խաղ անում դպրոցների հետ, յետոյ միաները, որոնք ուսումնասիրութեան դատարկ բարեկամ են ձևանում և այդպիսով անմեղ մանկները կրթութեան բնակարանը դառնում է շահագործութեան կամ առևտրական մի կրպակ, որ ինչպէս կուզեն, այնպէս էլ վարվի նրա հետ...

Ուսումնարանը խաղալիք չէ, որ ու ինչպէս ցանկանայ, այնպէս էլ նրա հիտ լիազ» անի... Չուրբ գլխիցն է հոտում. ամենից առաջ մեր թեմ. վերատեսուչն է խաղ անում դպրոցների հետ, յետոյ միաները, որոնք ուսումնասիրութեան դատարկ բարեկամ են ձևանում և այդպիսով անմեղ մանկները կրթութեան բնակարանը դառնում է շահագործութեան կամ առևտրական մի կրպակ, որ ինչպէս կուզեն, այնպէս էլ վարվի նրա հետ...

ունի, դրանով մենք պարտական ենք մասնատակաւորութեանը» ասում էր մեր երեկոյ մտածողներից մէկը:

Մենք թողնում ենք վիճել այս կարծիքի դէմ, թէ և հայր ամենին կրօնական ազգ չէ, և թողնում ենք հերքել մի. այսպիսի երեխայական դատողութիւն, թէ և լոկ կրօնով մի ազգ մշտապէս պահպանվել է կարող, և թէ եկեղեցին խիստ խախտում հիմք է ազգութեան գոյութիւնը պահպանելու, և ընդունում ենք, որ հայը իր կրօնով և եկեղեցով կարող է միշտ հայ մնալ. Բայց ճիշտեղ հայոց կրօնը և եկեղեցին այնքան վտանգի ենթակա են, որքան թիւրքալուծ:

Թէ ինչպէս է կլանում մահմետականութիւնը քրիստոնէայ ժողովուրդներին, բաւական է աչքի առնել ունենալ այն բազմաթիւ մահմետականացած հայոց գիւղաքաղաք, որ այժմ կարելի է տեսնել փոքր-Ասիայի ամեն կողմերում. Բայց թիւրքալուծ կայ մի աւելի սաստիկ վտանգ հայոց եկեղեցուն քրիստոնէայ միսսիօնարներէից, որոնք աւելի ճարպիկ են, քան մահմետականները, որոնք քարոզչներով են կրօնափոխ անում, իսկ թիւրքը բռնութեամբ: Ոչ մի երկրում կաթօլիկութիւնը և բողոքականութիւնը այնքան տարածված չէ հայերի մէջ, որքան Տաճկաստանում. համարեա ամեն տեղ մտել են նրանց քարոզիչները: Եւ ինչ խելքով ենք մտածում, թէ մեր եկեղեցին թիւրքալուծ ապահով գրութեան մէջ է: Կրօնափոխութիւնը այսուհետև աւելի կը սաստկանայ, երբ անդիւրացիները փոքր-Ասիան իրանց հովանաւորութեան տակ առնելով, կը մտցնեն հայերի մէջ իրանց միսսիօնարներին *): Մինչև այսօր յայտնված քարոզիչներն ամբերկալիք էին, այսուհետև կաւելանան և անգլիականները, իսկ այդ վերջինները

*) Գեռ ուսումնասիրական պատերազմից առաջ ինձ պատահեց թաւրիզում խօսել մի անգլիացի քահանայի հետ, որ վերադառնում էր տաճկական Հայաստանից. նա յայտնեց, թէ լծողումն նպատակ կայ քարոզիչներին մի առաջնութիւն ուղարկել Հայաստանում: Այդ մարդը ուղարկվել էր հետազոտել հողը...

Գանձակի երկսեռ դպրոցները այսօր այսպիսի ցաւալի դրութեան մէջ են գտնվում. ստիպված այդ բանից՝ պ. Նպակոպոսեանի պէս մի արժանաւոր ու տեղիս հաղուադիւտ երիտասարդ պէտք է թողնի դպրոցները և իր երեսի ջրով հեռանայ, մեղք ու վարձքը վերատեսուչ Տէր-Յովհաննիսեանին վրա գցելով...

Այնուհետև, կարծում ենք, լաւ կը շահվեն մեր ուսուցիչները, եւ առաւել պանդուխտ Երեմազանեանց իր անփորձ վարժուհիով... Այնուհետև մի հայ լրագիր վայրահաշուութեան ասպարէզ կը բանայ կուսածաղիկ դարձած՝ Գանձակի դպրոցների մասին. այնուհետև ամենքի սե սիրտը տեղը կընկնի... Եւ այդ դէպքում մեր յայտնված մի միայն հոգաբարձութեան վարմունքի և գործերի վրա կը լինի:

Գեռ դաստիարակութիւնը չէ շարունակվում. աշակերտաց և աշակերտուհիների մեծ մասը չեն ժողովւած. մեր թորոս-թաթոնները երեխաների հետ «խաղ» են անում... Կեցցէ վերատեսուչութիւնը, — Հետեանք մասին մի առ մի կը գրենք:

Ն. Ս.

ՆԱՄԱԿ ԽՍԻՍԿԱՐԻՆ

Ալեքսանդրապոլ, 8 սեպտ.

«Մշակի» № 148-ում կարդացի մի նամակ Ալեքսանդրապոլից Առօքմ Ափոյեանց ստորագրութեամբ, որի սխալ տեղեկութիւնները մասին կամենում եմ մի քանի խօսք ասել:

Պարոն յօդուածագիրը խօսելով յուլիսի 29-ին թեմական տեսչի ներկայութեամբ աւագ եկեղեցում եղած ժողովի մասին, ծայրէ ի ծայր զրպարտում է ասելով. «Ժողովի նախագահ հայր սուրբը, չընթացած մի քանի աղաներով, կարծես թէ նրանց կամքին միայն ստրկացած, բնաւ ուշք չէր դարձնում ոչ ժողովի բարեկարգութեան և ոչ իսկ խորհրդածութիւնների ազատութեան վրա...» յետոյ շարունակում է, «ես, որ ճանաչում եմ իմ անձին պատիւը, որպէս անգամ հասարակութեան, այդ ժողովի մէջ, երբ փոքր ինչ խօսելու հնար եղաւ, յայտնեցի թէ հողեր իշխանութիւնը հրամայել է, որ վարժապետները իրաւունք չունենան պատգամաւոր և հոգաբարձու ընտրելու. հազիւ բերանս բաց արի իմ միտքս յայտնելու, մի անգիցի աղմուկ բարձրացաւ և ինձ արգելեցին խօսել. հայր սուրբը բը-

աւելի հեշտ կերպով որսալ կարող են, քանի որ գիտենք, որ կրօնափոխ եղող հայերը աւելի եւրօպացիներից մահմետականների հալածանքների դէմ պաշտպանութիւն գտնելու համար են հեռանում մայրենի եկեղեցուց, և պաշտպանել անգլիացիները միշտ կարող են իրանց նոր հաւատակիցներին:

Թիւրքալուծ խորամանկ քաղաքականութիւնը կարծես լաւ էր ըմբռնել թէ ինչ նշանակութիւն ունի կրօնափոխութիւնը հպատակ քրիստոնէայ ազգութիւններին մէջ: Նա տեսնելով, որինակ հայերին մի կրօնական ժողովուրդ, որ ուրիշ հիմք չէ ճանաչում իր ազգութեան բացի եկեղեցին, միշտ աշխատել է զբաղեցնել նրանց կրօնական երկպառակութիւններով, միշտ աշխատել է քակտել նրանց միութիւնը, թոյլ տալով տարածվել հայերի մէջ կաթօլիկութեան և բողոքականութեան: Հին սուլթանները ազգայնութեան աւելի հիմնական արմատին էին դարձում—լեզուն, և որի պատճառով յայտնվեցան այնքան բազմաթիւ տաճկախօս և քրդախօս հայեր, որ մինչև այսօր էլ կան, թէ և հայոց եկեղեցուն են պատկանում: Իսկ վերջին սուլթանների ժամանակ սկսեցին քրիստոնէայ ժողովուրդների ուժերը թուլացնել և նրանց ազգային միութիւնը բաժանել կրօնական հերձուհիներով:

Թիւրքալուծ քաղաքականութիւնը չէր բաւականանում, որ հայերից նոր եկեղեցիներ էին բաժանվում, այլ աշխատում էր այդ վերջինների մէջ ևս հերձուածներ տարածել, որպէս եղաւ հայ բողոքականների և հայ-կաթօլիկների մէջ: Այդ մասին բաւական է յիշել հասունեանների և հասունեանների կողմից քանի տարիներ տեցեց և եթէ կառավարութիւնը օգնեց հակահասունեաններին, ոչ նրանց աւելի ազատամիտ ձեռնարկների համար էր, այլ որ նրանք մի նոր հերձուած էին կազմում հայ-կաթօլիկների մէջ, մի չափով տկարացնում էին նրանց ուժերը: Այժմ լսում ենք կրկին ներս թողնել Հասունին և Պոլիս, երեւի հին երկպառակութիւնները նորոգելու համար:

Նաւ չը հողաց ամբոխին զսպելու համար, այլ թողնեց, ինձ ժողովից դուրս անելու:— Եւ որպէս ժողովում ներկայ գտնվող անդամներից մինը, պարտք եմ համարում յայտնել, որ գեր. վարդապետ Ալվազեանց, սկզբից մինչև վերջը նոյնութեամբ հետևում էր Վահագնի տուած հրահանգին: Սկզբից նա ժողովից պահանջի համաձայն, կարգաց բոլորի ներկայութեամբ իրան սինօդից տուած հրահանգը: Հրահանգը կարդալուց յետոյ, ժողովուրդը կարծիք յայտնեց, թէ ինչ հարկաւորութիւն կայ նորից պատգամաւորներ ընտրելու, քանի որ նորա ընտրված են յունիսի 18-ին հրապարակական ժողովում կանօնաւոր կերպով, հողեր կառավարութեան անդամ Տէր-Թադէոսի, հոգաբարձութեան նախագահ՝ Մարտիրոս քահանայի, քաղաքի ղեկավարաւոր, թաղապետների և բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ խորհրդով: Եւ մօտ 1500 մարդիկ էին հասնում, իբրեւ մի սիրտ, մի հողի, իրաւաւոր հարցնում էր ժողովի նախագահ հայր սուրբից. թէ իմացէ՛ք այդտեղ նստող տէր հայրերից թէ ինչ պատճառով և տրամաբանութեամբ որ հիման վրա, իրանց յունիսի 18-ին կատարած մի այնպիսի պատուական ժողովը դրանք անվաւեր, անկանոն, կըրքից առաջացած են համարում, իսկ մի ուրիշ ընտրութիւն, որ կատարվել է գիշերային այցելութեամբ, ծածուկ կերպով, կշիռ ու նշանակութիւն է ստացել դրանց կողմից: Տէր-հայրերը ընդունեցին Չաքարայի լուծվելը: Իսկ հայր սուրբը շարունակեց. «Ինչ որ եղել է անցել է, եւ սինօդից ուղարկված եմ իմանալու երկու կատարված ժողովների ճշգրտութիւնը, դուք հանդարտվեցէ՛ք և շարունակեցէ՛ք ձեր ընտրութիւնը: Այլ երկու անգամ ժողովի յուզմունքը հազիւ կարողացաւ հանդարտեցնել և գործը շարունակել տալ: Պ. Առօքմ Ափոյեանցը իր մի քանի ընկերների հետ աղմուկ բարձրացրեց ժողովը խանգարելու համար և այդ պատճառով յուզված հասարակութիւնը հեռացրեց նրան ժողովից: Վարդապետը ինչ կարող էր անել, երբ նրան (Ափոյեանցին) ձայնից բազմութիւնը հեռացրեց: Պարոն Ա. Ա. — այնպիսի խօսքեր է յայտնում, որ ինքն իր խօսքով բռնվում է. վերը ասում է թէ վարդապետը օր առաջ եկեղեցում քարոզ տուեց ու հրաւիրեց ամեն մի անձի ներկայ լինելու ժողովին, յետոյ ներքուստ փութում է խօսքը, ասելով՝ ժողովում ներկայ չէին հասարակութեան պատուաւոր անդամները, սրա պատճառը, ոչ թէ նրանց անտարբերութիւնն էր,

Առհասարակ թիւրքալուծ քաղաքականութիւնը մենք շատ միամիտ ենք համարում, քան թէ է. չը նայելով, որ նա իր մօնօրական խաբէութեան վրա պատուաստել է բիւզանդական խորամանկութիւնը: Նա գիտէ իր հպատակ ժողովուրդների մէջ միշտ խռովութիւններ սերմանել, նրանց միութեան կապերը խելել: Ով որ ուսումնասիրել է Կ. Պոլսի հայոց լրագրութիւնը, կը յիշէ, որ Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքը մի եկեղեցականութեան խնձոր է Կ. Պոլսի հայոց, յունաց պատրիարքարանների մէջ. ամեն տարի սուրբ Գարութեան տօնին ինչ անկարգութիւններ են պատահում հայ և յայն արեղանների մէջ, շատ անգամ կռիւները արկւնհեղութեան են հասնում. բայց այսքան տարիների ընթացքում կառավարութիւնը վերջ չը գրեց նրանց վէճերին, թէ և չնչին բաներ են:

Այժմ, կարծում եմ, թողնեց մեզ հետ կը համաձայնվի, թէ ինչ վտանգ է սպառնում հայոց եկեղեցուն թիւրքալուծ, և եթէ դա պէտք է լինի ազգի գոյութիւնը պահպանող հիմունքը, նրա կեանքը խիստ երկբայական է... Բերլինի դաշնագրի համեմատ թիւրքալուծ խոստացած «կրօնի ազատութիւնը» մի նոր ասպարէզ պիտի բաց անէ եւրօպայի քարոզիչների առջև, և հայրը փոքր-Ասիային հովանաւորող անգլիացիներին պաշտպանութիւն գտնելու յոռւով պիտի դռնին իրանց կրօնը. ով կարող է մրցութիւն անել նրանց հետ, — մեր անհող հողերականութիւնը, թէ մեր թեմականի ուսումնականները... — Ոչ ոք մեր կարծիքով: Այժմ կը մնայ թիւրքալուծ հային թողնել եկեղեցին, թողնել կրօնը անհատներին յղմի վրա և ձեռք անելին հայ-կաթօլիկին, հայ-բողոքականին և հայ-մահմետականին, ասել նրանց. «մենք եղբայրներ ենք, մենք միասին պէտք է բաժանենք մեր ն երկր և ապագան, թող եկեղեցին չը բաժանէ մեզ, միացնենք մեր ուժերը և միասին գործենք»:

Վերջացնելով մեր յօդուածը, կը համառօտենք մեր կարծիքը այս խօսքերով. Այժմ որ Կ. Պոլսի պատրիարքը զբաղված է թիւրքալուծ հայերին

այլ վարդապետի անհողութիւնը, որ հնար չը մտածեց նրանց բերելու ժողովում: Գրանից էլ լաւ հնարք. ապա ինչ հնարքով էին հաւաքվել 1500 մարդիկը:

Պարոն նամակագիրը կրկին բամբասում է հայր սուրբին, որ նա չը պէտք է թոյլ տար իբր, ոչ մէկ հին հոգաբարձուներից կրկին ընտրել տալ. ինչու, միթէ դա էլ հրահանգի հակառակ էր. կամ թէ վարդապետը ինչ կարող է ասել երբ այնտեղ դեր է խաղում ձայների առաւելութիւնը. ինչու չը պէտք է ընտրել դրանց. միթէ այն պատճառով որ դրանք համարվում են ժողովի մէջ հասկացող անձինք ու յայտնի են իրանց գործունէութեամբ, կամ ան պատճառով որ դրանք այնքան զարգացած են, որ չեն թոյլ տայ ուսումնարանը ձգել հողեր կառավարութեան անդամների կառավարանութեան տակ: Ապա ում ընտրել ենք. այն աղային, որ անամօթաբար տակն է դրել ուսումնարանի փողոցը, կամ ան աղային, որ իր սենեկապահ նշանակված ժամանակը, ուսումնարանի բանալին (երբ հրահանգներն տարան), դիտմամբ յանձնել էր հիւանդանոցի վարչութեանը, որ իրանց համար պահեստատեղի չինեն, որպէս զի ուսումնարանը փակ թողնելով, ստիպեն հոգաբարձութեանը արձակել ուսուցիչներին, որ յետոյ իրանց հեշտ լինի «պղտոր ջրում ձուկ որսալ»: Թէ ինչ են ուղում դրանք ուսուցիչները, որ աշխատում են միշտ խոչընդոտ լինել նրանց գործունէութեանը, մեզ յայտնի է:

Պարոն յօդուածագիրը, երեւի այնքան անաղ-նիւ է, որ չը գիտէ արժանաւոր մարդուն պատու տալ. նա մի րօպէում բողոքովն ուրանում է հին հոգաբարձութեան (հասկանում ենք թէ ինչ է ուղում ասել) գործունէութիւնը ասելով. «Ինչ է արել հոգաբարձութիւնը յօդուած դպրոցների, դեռ անհերք բան չը կայ. այսքանս միայն կասեմ, որ անչարժ կալուածները քաղաքայ յաջող ժամանակները դպրոցին մինչև քսան և հինգ հազար րուբլ, կամ աւելի արկւնք պէտք է բերելին, բայց հոգաբարձուներն անտարբերութեանց կամ յանախարակութեանց մինչև այժմ այնպիսի անձանց ձեռքին են, որ ոչ միայն մի չնչին վարձ են տալիս, այլ և այդ չնչին վարձերից գոյացած գումարն էլ երկու տարի է բնաւ չէ երևում»:

Հարցնում ենք, հոգաբարձուները որ հիման վրա կարող էին կրպակների գները աւելացնել, երբ սեպտեմբերի մէկին 1876 թ. խաղաղ ժամանակ, հրապարակական աճուրդով վարձել են կրպակատէրերը և առանձին առանձին պայ-

տրվել վերանորոգութիւններով, նախ և առաջ պէտք է միանայ հայ-կաթօլիկների և հայ-բողոքականների ներկայացուցիչներին հետ, և որպէս ընդհանուր ազգային գործ, գլխաւորապէս պէտք է ինչպիսի ունենան հետեւալ պահանջները. ա. երկրագործը, գիւղացին սեփական հող ունենայ և նրան ապահովութիւն տրվի ազատ մնալ հին բուսաւորների, հարստահարիչների աւազակութիւններից: Բ. Հայերը իրաւունք ունենան զէնք կրելու որպէս իրանց զրացի ազգերը, և փոխանակ դիւնաւորական տուրք վճարելու, նոյն վճարով կազմեն ազգային միլիցիա գանազան վայրերի ցեղերից — քրդերից, չէրքէզներից — իրանց կեանքը և կայքը պահպանելու համար: Գ. Հայոց ազգային սահմանադրութիւնը, նոր իրաւունքներով և արտօնութիւններով կատարելազորվելով, տարածվի բոլոր հայաբնակ գաւառներում: Դ. Ազգը և ազգային առանձնութիւնները պահպանելու համար այնպիսի կարգադրութիւններ լինեն, որ սահման դրվի մահմետականների մոլեռանդութեանը, և բունի հաւատափոխութիւններին, առեւանդութիւններին վերջ դրվի: Այլ և վաւերելի և ազգային դպրոցների առաջադիմութիւնը սահմանափակող թիւրքալուծ գործ զրա՞ծ խորամանկ միջոցները հեռացվել, որ ուսումը և կրթութիւնը անարգել ընթացք ստանայ:

Ժամանակ է թօթափել հին նախապաշարմունքների փոխին, ժամանակ է ձեռք առնել դպրոցը, որպէս մի նոր կապ մեր և մեղանից օտարացած ազգայինների մէջ. — որպէս մի նոր աւազան, ուր հայ-կաթօլիկը, հայ-մահմետականը և հայ բողոքականը կը մերտնջն նոր հողով և նոր կեանքով և կը դրոշմվեն ազգային յոռւութեան անուշով. — դրանով միայն կարող ենք միացնել մեզ հետ մեր եղբայրներին, որ բաժանեց եկեղեցու աւազանը...

Մեկեղադէ

ման կապել հոգաբարձուների հետ (Սուքիաս ե-
պիսկոպոսի նախագահ ժամանակ)։ Միթէ յայտնի
չէ ձեզ պարոն, պայմանի այն կէտը, որ ուր կը
քանդի պայմանի զօրութիւնը, նա պարտաւոր-
ւում է անպիսի գումար տուգանք տալ միւս կողմ-
ին, ի՞նչ անէր հոգաբարձութիւնը. աշխատէր
ու չը կարողանար քանդել պայմանի զօրութիւնը,
միթէ դա պատու կը բերէր նրան։ Պատեալով
ծաղից, աղող տարի եղաւ, դա կրպակատերերի
բաղդն էր. դուցէ և լինէր այնպիսի տարի, որ
բոլորն էլ մնաւ անէին։ Միթէ բաւական ապա-
ցոյց չէ կրպակատերերի ազնիւ սրտի որ չը
նայելով իրանց պայմանի զօրութեանը, խոտա-
ցան հոգաբարձուներին, ամեն յաջողակ տար-
վայ համար իւրաքանչիւրը 40 ռուբլի նու-
րել ուսումնարանի օգտին. այդպէս էլ նուրբե-
ցին բոլորը։

Մենք դարձանք ենք, որ այդ ուրիշ անուամբ
յօդուած պատրաստող պարոնը, որ շատ քիչ
հասկացող է համարել սուտ, ինչպէս թոյլ է տա-
լիս իրան այդպիսի սուտ դրպարտանքներ գրե-
լու. չէ խղճահարկում արդեօք թէ իր խղճի և
թէ ամբողջ հասարակութեան առաջ։ Մեր խո-
սելու, մեր բողոքելու, մեր գրելու տեղ դուք
էք ձայն հանում։ Այնքան ցաւեր ունի մեր հա-
սարակութիւնը ձեր այդ փոքր կուսակցիներէ
կրած, նայելով ուսումնարանի շահերին, որ անա-
գիւն մատենաներ են հարկաւոր նրա ցաւերը,
նրա զանգառները ու ձեր անամօթ գործ դրած
միջոցները արձանագրելու համար։ Այստեղ մի
երկու խօսք այդ փոքրիկ խումբի մասին, որ
ստացել է մի կուսակցական ձև։ Գեր. Սուքիաս
եպիսկոպոսի այստեղից հեռանալուց յետոյ,
հետզհետէ սաստկացաւ Ալեքսանդրօպօլի հա-
սարակութեան զայրոյթը. որովհետեւ այնպիսի
արդարաւոր, ազնուասէր եպիսկոպոսը, փոխա-
նակ պաշտպանութիւն գտնելու այնտեղից, որ-
տեղից անաչառ քննութիւն էր սպասում, դատա-
պարտեցաւ աքսորանքի Ս. Գեղարդի վանքը,
իսկ Տէր-Յովսէփի քահանայն, որի վրա հազար ու
մի իրաւացի գանգառներ և բողոքներ կան, փո-
խանակ մեղաւոր դուրս գալու հոգեւոր իշխանու-
թեան կողմից, վերադարձել է իր տեղը ու հան-
գիստ ապրում է։ Ժողովուրդը բոլորը միասին
անդադար ժողովներ են կազմում, շարունակ
աշխատում են միջոց գտնել, կրկին այնպիսի օգ-
տաւէտ առաջնորդին որի ժամանակ մեր թէ ու-
սումնարանները և թէ եկեղեցիքը ծաղկած, բա-
րեկարգված էին։ ձեռք բերելու։ Իսկ այդ Տէր-
Յովսէփի մի քանի բարեկամներէր բաղկացած
խումբը, աշխատում է, եպիսկոպոսին հեռաց-
նել տալով չը բաւականացած, հասարակութեան
այդ արդար ձայնը խնդրել. ամեն միջոցներ
գործ է դնում միամիտ հասարակութիւնը խաբե-
լու և խլրդելու համար, բայց իզուր, որովհետեւ
ինչ կարող է գործել ամբողջ ժողովրդի դէմ այդ
փոքրիկ խումբը. Բարեբաղդաբար այդ Ատ.
Ափօյեանցն էլ իր նպատակի իրագործումը
(այստեղ է թէ ինչպէս է սպասում) սպասելու
համար, միացել է այդ խմբի հետ։ Կրանք բո-
լորն էլ պարագայ, անգործունեայ և ծոյլ մարդիկ
են. աշխատում են ուսումնարանի և ամբողջ
հասարակութեան վրա բռնաժաշ. շարունակ գի-
շերային ժողովներ են կազմում իրանց նենգ
խորհուրդները միմեանց հաղորդելու համար.
Ունեն իրանց համար մի ժողովատեղի եկեղեցու
մուտքաճառի կրպակում, որին ժողովուրդը կո-
չում է «անկեղանոց»։ Բայց հասարակութիւնը
գործով զբաղված է, նա ինչ գիտէ թէ ինչ են
գործում այդ անձինքները...

Վերջացնելով մեր այս արդար պատասխանը,
վստահանում ենք դարձնել Վեհ. Հայրապետի
ուշադրութիւնը ժողովրդի արդար պահանջմունքի
վրա, չը թողնել հոգեւոր կառավարութեանը մի-
ջամեղ տեղիս ուսումնարանների գործում և
պարզել իրանց այն ցանկալի Սուքիաս եպի-
սկոպոսին, յօգուտ և յառաջդիմութիւն ուսում-
նարանների և ամբողջ հասարակութեան։

Այս նամակը պատրաստել էի, երբ լսեցի,
որ էջմիածնից հեռագրել է ստացել քաղաքիս
դեպուտատը, թէ նորընտիր հոգաբարձուների
հաստատութիւնը արդէն վաւերացրած է Վեհ.
Կաթողիկոսին և ուղարկված հոգեւոր կառավա-
րութեանը։ Իսկ հոգեւոր կառավարութիւնը այդ-
քան ժամանակ պահել էր հոգաբարձուների
հաստատութիւնը իր մօտ առանց ոչ ոքին յայտ-
նելու. միթէ սա էլ ապացոյց չէ դրանց չա-
րամտութեան։

Գ. Ղասապեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿԻ ՃԱՌԸ

(Շարունակութիւն և վերջ)

«Վերադառնալուսկան միջնորդութեան մէջ
մենք փորձեր ենք անում պիւղատնտեսական
զանազան սխտեմների վրա, մենք փորձեր
ենք անում նոյնպէս գործարանների բաժնու-
նայ արդեօք օգտակար կը լինէր այդպիսի
փորձեր անել սօցիալական խնդիրը լուծելու
համար։ Ինչ կարելի է մեղադրել միայն նը-
րանում, որ ես այդ գործը չեմ շարունակել
մինչև բաւարար հետևանքին հասնելը։ Բայց
այդ իմ գործը չէր, ես ժամանակ չունէի։
Հասան պատերազմական ժամանակներ, ես
զբաղված էի արտաքին քաղաքականու-
թեամբ։ Այդպիսի գործի համար ինչ ժա-
մանակ էր հարկաւոր։ Բայց հէնց որ դժուար
ժամանակները անցան, ես կարող էի նորից
նուրբել իմ գործունեութիւնը այդ հարցին։
Այդ գործը կառավարում էր վերին աստի-
ճանի պատուաւոր մարդ, ինչպէս լանդրատ
Օլէարիուս, բայց փորձը չաջողվեց։ Այնու-
ամենայնիւ այդպիսի փոքր փորձի անաջողու-
թենից չէ կարելի եղեակցել։ Բայց ինչ ընդ-
հանրապէս սխալ է։ Այդպիսի հիմնարկու-
թիւններ, ինչպէս Կրուպկի հիմնարկութիւնը
գուցէ անկարելի լինէր հանրապետական կազ-
մակերպութեան ժամանակ։ Ես ընդունել չեմ
որ գործարանական առօրեայ կեանքում
բանուորների դրութիւնը բարելոքելու համար
կազմվող ընկերութիւններին օգնութիւն
տրվի, — յանցաւոր չէ նոյնպէս այն պետական
մարդը, որ նոյն նպատակի համար ծախսում է
պետական դրամաւորդից։ Ինչքան յիշում եմ
գործարանական բաժնի արդեօք չէր դնում
այդ գործի հիմնելուն և ընթացքին։ Գուցէ
ամեն բան կարված է նրանից, որ գերմանացի
բանուորները այնքան չեն հաւատում միմեանց,
ինչպէս այդ նկատում եմ անգլիացի բանու-
որների ընկերութիւնների մէջ։ Բայց ես չեմ
կարող հասկանալ ի՞նչպէս են ինչ մեղադ-
րում, որ ես այդ նպատակի համար գործ
դրի ոչ թէ պետական փողեր, այլ նորին մե-
ծութեան սեփական փողերից ընծայած գու-
մարը և ի՞նչի իմ այդպիսի վարմունքը, իբրև
միջնորդի վարմունք, պէտք է ցածութիւն
համարվի։ Բայց իսկապէս մի վստ ըստ կա-
րելի է իմ անձնաւորութեան մէջ գտնել նը-
րանում, որ ես չը շարունակեցի փորձը։ Այդ-
պիսի առասպելներ չեն պատում այդպիսի
ժողովներում։ Լասալից յետոյ ներկայա-
նում է օգոտոր Դամմեր. այս անունը ինչ
անձնաւոր է։ Ամաշելով պէտք է խոստովա-
նեմ, որ նոյնպէս չը գիտեմ թէ ո՞ր է Ֆը-
րիցը (Տիմաղ), իսկ այստեղ պատմում
են, որ Ֆրիցը զեկուցումներ էր ներկայաց-
նում իշխան Բիւմարիին։ Այդ բանը պատ-
մելով դարձեալ սուտ են ասել պ. Բեքելին։
Ես չը գիտեմ ո՞ր կարող է լինել ինչն Ֆրիցը։
Ես չը գիտեմ ո՞ր է Ֆրիցը (բացականչութիւն
այստեղում)։ Ուրեմն ես ներողութիւն
եմ խնդրում ուրեմն այդ անկարելի է։ Պատ-
գամաւորը այդպիսի բան չէ կարող անել։ Ես
կը խնդրեի պ. Ֆրիցընցի վկայել զորի է ար-
դեօք նա որ և է զեկուցում, կարգաւոր եմ
արդեօք ես նրա զեկուցումները, նշանակել է
արդեօք զեկուցումների մէջ որ և է նախա-
դատութիւն գոյնաւոր մատուցել։ Եթէ նա
այստեղ է, կարող է լաւ վկայ լինել։ Ի՞նչ
ես այժմ չեմ բորձրանում իր տեղից և չեմ
պաշտպանում պ. Բեքելին։ Եթէ նա պատ-
գամաւոր է, ես պատրաստ եմ հազար ան-
գամ ներողութիւն խնդրել, որ ես ինչ թոյլ
տուի նրա մասին կասկածներ յայտնել։ Ճշմա-
րիտ շատ հետաքրքիր է իմանալ ո՞ր է երգել
Բեքելին այդ պատմութիւնը։ Պարոն Վազե-
ներին ճշմարիտ է ես ուղարկեցի էյդենախ

այնտեղի խորհուրդների և ճառերի մասին
ինչ տեղեկութիւն տալու համար, այդ իմ
պարտականութիւնն էր, իսկ պարոն Վազե-
ներ այդ գործի մէջ հմուտ մարդ էր։ Վե-
րադառնում եմ այժմ այն հարցին, թէ երբ
և ի՞նչի համար ես հրաժարվեցայ իմ այդ
տեսակ աշխատանքներից։ Այդ հանգամանքը
պատահեց այն օրակէց, երբ պարլամենտի
մէջ դարձեալ չեմ մտաբերում ո՞ր, պատգա-
մաւոր Բեքել թէ Լիբլիստ, սրտաշարժ
խօսքերով Ֆրանսիական կոմունան նկարագրեց
իրբև քաղաքական խեղացիութեան օրինակ և
բացարձակ սկսեց դաւանել այդ մարդասպան-
ների և այրողների աւետարանը։ Այդ ինչ
համար լցաի մի ճառագայթ էր, որ լուսա-
ւորեց բոլոր գործը։ Այն ժամանակից սօցիա-
լական տարրի հետ ես սկսեցի պատերազմել
իրբև թշնամու հետ, որի վերաբերութեամբ
պետութիւնը ստիպողական պաշտպանողական
զիջք է ընդունել։ Այս կռիւ վերաբերու-
թեամբ իմ արած փորձերը դեռ երևի պար-
լամենտը յիշում է։ Ես աջողութիւն չունեցայ
և այդ առարկայի մասին ինչ վրա շատ մեղա-
դրանքներ բարձեցին։ Ֆրանսիան բաւական յիտ
է քաղվել սօցիալականութեան առաջնակարգ
տեղից և այժմ այնպիսի դիւք է ընդունել,
որ կառավարութիւնը և հասարակութիւնը
կարող են հաշտ ապրել։ Բայց ի՞նչ միջոցների
օգնութեամբ։ Ոչ թէ թոյլ այլ զօրեղ միջոց-
ների օգնութեամբ, որոնց հետեւել ես ձեզ
խորհուրդ չեմ տալիս։ Անգլիայում այդպիսի
անկարգութիւնների համար աւելի սաստիկ
պատիժ է որոշված։ Ում կը բռնեն այդ յան-
ցանքի մէջ երեսուն օրվայ կալանաւորու-
թեան են դատապարտում։ Բայց ի՞նչպէս է
անգլիական բանտը։ Նա մեր բանտերի նման
չէ, որտեղ պարոններ կալանաւորվածները ի-
րանց շատ լաւ են զգում։ Անգլիական բան-
տերը հորիզոնական փոսեր են։ Տպագրական
երկարամեայ ազատութեանց յետոյ՝ ես շատ
տարիներ հետեւել եմ մամուլին, ես նկատել
եմ, որ նա զրգուել է դէպի բռնադատու-
թիւն, պատրաստել է բռնադատութիւն։ Այդ
հանգամանքը պարզ երեւաց մանաւանդ վեր-
ջին շաբաթների ընթացքում։ Ես մի յօդուած
եմ մտաբերում, որ տպված էր եղել սօցիա-
լական լրագրում և որից «Post» լրագիրը
քաղուած է արել։ Այդ յօդուածի մէջ դե-
ներալ Սեզնեցիկ սպանութիւնը դուրս էր
բերված իբրև օրինաւոր պատիժ և բաւական
որոշ ոճով մի և նոյն սխտեմը առաջարկ-
վում էր և Գերմանիայի համար։ Այդ յօ-
դուածը վերջանում էր սպանողական խօս-
քերով։ Երևի դուք ամենքդ յիշում էք այդ
յօդուածը։ Նորերում կարգացի երևի նոյն
լրագիր յօդուածը, որտեղ ասված էր, որ մեր
այժմեան օրէնքները և կարգերը ոչինչ չեն
կարող անել սօցիալ-դեմոկրատիային և որ
բոլոր օրէնսդիրները պէտք է հասկանան
իրանց պատասխանատուութիւնը և յօդուածը
դարձեալ սպանողական խօսքերով էր վերջա-
նում։ Այդ նշանակում է, որ դուք նախա-
զգուշութիւն էք ստացել։ Նախազգուշութիւն
ստանալ ումից և ի՞նչեց։ Ի հարկէ նիհիլիս-
տների դանակից և Նօբիլիցի հրացանից։
Այո, եթէ մեզ վիճակված է այդպէս ապրել
աւազակների խումբի բռնադատութեան տակ,
այն ժամանակ կանքը մեր աչքերում կը
կորցնէ իր բոլոր դինը և ես յոյս ունեմ, որ
պարլամենտը, մենք ամենքս կը բռնենք կա-
ռավարութեան կողմը, կայսրի կողմը, որ
պաշտպանութիւն էր պահանջում իր անձի
համար, իր պրուսացի հպատակների և գեր-
մանացի հայրենակիցների համար։ Շատ կա-
րելի է, որ այս դէպքում մեզանից մի քանիսը
զոհվեն, բայց ամեն մէկը, որին այդ կը
վիճակվի, թող մտաբերէ, որ ընկել է իր հայ-
րենիքի մեծ բարօրութեան համար սկսած
պատերազմի պատուաւոր դաշտի վրա։ (Մեծ
գոհունակութիւն աջ կողմում)։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻՑ, 19 սեպտեմբերի (1 հոկտեմբերի)
Անգլիական հաւատարմատարը Ս. Պետեր-
բուրգում յանձնեց ռուսաց արտաքին գոր-
ծերի միջնորդին մի շրջաբերական, որի մէջ
գրած է հետեւեալ հարցը. ինչպէս է համա-
ձայնեցնում ռուսաց կառավարութիւնը գե-
ներալ Ստոյեցովի դեսպանութիւնը Կարու-
մէջ իր յանձն առած պարտականութեան հետ
հրաժարվել Աֆգանիստանի վրա քաղաքական
ազդեցութիւն գործելուց։ Ռուսաց կառավա-
րութիւնը պատասխանեց. գեներալ Ստոյե-
ցովի դեսպանութիւնը վճռած էր այնպիսի
հանգամանքների ժամանակ, որոնք այժմ
այլ ևս չը կան և դեսպանութեան նպատակն
էր քաղաքավարութիւն ցոյց տալ էմիրին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 սեպտեմբերի. «Голос»
լրագիրն ձեռնիկէից հեռագրում են,
որ Չերնոգորիայի իշխան Նիկոլայու ինքնա-
գիր նամակով խնդրեց գեներալ Ֆիլիպովի-
չին, որ նա թոյլ տայ Չերնոգորիայում ա-
պաստանված ապստամբներին ազատ վերա-
դառնալ հայրենիք։ Եթէ աւստրիական իշխա-
նութիւնը չապահովէ ապստամբների անպա-
տիժ մնալը, իշխան Նիկոլայու մտադիր է
նրանց Ալբանիա ուղարկել։ Չերնոգորիան իր
մէջ ապաստանված փախստականների կերա-
կելու կարողութիւն չունէ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 սեպտեմբերի. «Пра-
вит. Вѣстн.» լրագիրն մէջ հրատարակված է,
որ Թագաւոր Կայսրը հրամայել է իրաւունք
տալ ընդհանուր պօլիցային և ժանդարմե-
րին ազատ մուտք գործել բոլոր գործարան-
ները ամեն ժամանակ, այն պայմանով, որ
հետախուզութիւնները կամ մէկի կալանաւո-
րելը կատարվի գործարանի կառավարչի ներ-
կայութեամբ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 սեպտեմբերի. «Новое
Время» լրագիրն Վիեննայից հեռագրում են.
Ֆինանսների միջնորդը շարունակում է հրա-
ժարվել։ Ունգարական միջնորդ Տիսսա ընդ-
դէմ է, որ Նօբո-Բազարի սանջակում շարու-
նակվեն պատերազմական գործողութիւնները
նա պահանջում է Բոսնիայի և Հերցեգովինայի
վերադարձնել Ռուսիային, որի հետ պէտք
է մասնաւոր դաշնագրութիւն կապվի։ Կայ-
սերական կանցլերիան շարունակում է բա-
նակցութիւնները և պահանջած կրեդիտը
քաջացրեց մինչև 50 միլիոն գուլդէն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 սեպտեմբերի. «Голос»
լրագիրն հեռագրում են Կ. Պոլսից,
որ Արևելեան Բուլղարիայի բոլորացի ազգա-
բնակութեան տրամադրութիւնը սկսում է օ-
տար դեսպանների ուշադրութիւնը իր վրա
դարձնել։ Հաւատարմագրում են, որ Ֆիլիպովի
ազգաբնակութիւնը մտադիր է չընդունել
միջադպրոցի մասնաժողովը, որի հաւաքվելու
տեղը այդ քաղաքն է նշանակված։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 սեպտեմբերի. Երեկ
մտաւ մայրաքաղաքը գլարդիայի զօրքերի
վերջին բաժինը։

ՊԵՏ, 21 սեպտեմբերի (3 հոկտեմբերի)։
Անգարական կարինետը իր հրաժարական
տալու մասին խնդրեց ներկայացրեց։ Ֆինանս-
ների միջնորդը նոյնանման խնդրեց ներկա-
յացրեց։ Ֆրանց-Յովսէփ կայսրը դեռ ևս չէ
յայտնել իր վճիռը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 սեպտեմբերի. Պետա-
կան բանկի 5% տոմսեր առաջին շրջանի
արժէ 96 ռ. 75 Կ., երկրորդ 96 ռ. 75 Կ.,
երրորդ 95 ռ. 62 Կ., չորրորդ 96 ռ., ներ-
քին 5% առաջին փոխառութեան տոմսեր
արժէ 236 ռ. 50 Կ., երկրորդ 228 ռ. 25 Կ.,
արևելեան 92 ռ. 75 Կ., ոսկի 8 ռ. 15 Կ.։
Հրամարութիւնը ամուր է։

